



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՔՐԵՏԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, Մարտ 8ը Մեծ Պահոց երրորդ Կիրակին է՝ Անառակի Կիրակին: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Քրեստենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի տայ իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT THE CRESCENTA VALLEY CHURCH

Sunday, March 8th, is the third Sunday of Great Lent, which is also known as Sunday of the Prodigal Son.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at the Armenian Apostolic Church of Crescenta Valley. The Prelate will also deliver the sermon.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԵՌՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, Թեմիս Եկեղեցիներու Երիտասարդաց Միութեան Կեդրոնական Մարմինը յառաջիկայ շաբաթավերջին կազմակերպած է եռօրեայ համագումար մը, որ տեղի պիտի ունենայ Հ.Ե.Դ. ճամբարի մէջ, Ուրբաթ, 13էն Կիրակի 15 Մարտին:

Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան պիտի վարե աղօթքի պահեր. մասնակիցները պիտի ունենան հոգեւոր նիւթերու մասին գրոյցներ եւ պիտի լսեն դասախօսութիւններ Հոգեւոր Արթնութեան մասին:

ACYA “SPIRITUAL AWAKENING” RETREAT

Under the auspices of the Prelate, the Central Board of the Armenian Church Youth Association has organized the first annual “Spiritual Awakening” retreat, which will take place on Friday, March 13th, to Sunday, March 15th at AYF Camp.

The retreat will be led by Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and will include prayer services, worship, and enlightening and educational lectures.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ԳՆԱՀԱՏԱՆՔ ՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՈՒՍԱՆՑԷ ԶԱՒԱԽՔԻ Ի ՆՊԱՍՏ ՀՕՄ-Ի ՁԵՌՆԱՐԿԻՆ

Կիրակի, Մարտ 8-ի յետմիջօրէին, ՀՕՄ-ի «Զաւախք» հիմնադրամի յանձնախումբի 4-րդ տարեկան ձեռնարկը տեղի պիտի ունենայ Crystal նաւուն վրայ, Նիւփորթ Պիչ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Օրէնճ Բաունթիի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Հրանդ Թիւրք. Երեցեան ներկայ պիտի ըլլայ ընթրիքին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր բարեմաղթութեան եւ օրհնութեան խօսքը:

A.R.S. JAVAKHK FUND COMMITTEE 4TH ANNUAL GALA DINNER

On Sunday, March 8th, the 4th annual A.R.S. Javakhk Fund Committee gala dinner will take place aboard the “Crystal” Yacht in Newport Beach.

Pastor of Forty Martyrs Church Rev. Fr. Hrant Yeretizian will represent the Prelate and convey his blessings and well wishes.

ԱԶԳ. ԱՐԻ ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Շաբաթ, Մարտ 7-ի երեկոյեան, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, Օրէնճ Բաունթիի Արի Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարանի տարեկան ձեռնարկը տեղի պիտի ունենայ վարժարանի «Ղուկասեան» սրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Հրանդ Թիւրք. Երեցեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր բարեմաղթութեան ու օրհնութեան խօսքը: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգային Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան:

A.G. MINASSIAN SCHOOL ANNUAL BANQUET

On the evening of Saturday, March 7th, the annual banquet of A.G. Minassian School in Orange County will take place under the auspices of the Prelate at "Gugasian" Hall.

Rev. Fr. Hrant Yeretzian will represent the Prelate and convey his blessings. Executive Council Chair Dr. Garo Agopian will also attend.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՆԻ» ՊԱՐԱՆՈՒՄԻ 35-ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Շաբաթ, Մարտ 7-ի երեկոյեան տեղի պիտի ունենայ Համազգայինի «Անի» պարարուեստի միաւորի 35-ամեակի ճաշկերոյթ-պարահանդէսը, Միշըն Հիլզի Արարատ Տան «Stopմէճեան» սրահին մէջ:

Ելոյթ պիտի ունենայ «Անի» պարահումբը, ղեկավարութեամբ պարուսոյցներ՝ Սիւզի Բարսեղեան-Դարբինեանի եւ Եղիա Հաշոյեանի:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները: Առաջնորդ Սրբազանին պիտի ընկերանայ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան: Ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգային Վարչութեան անդամ Տիար Խաչիկ Երեցեան:

PRELATE TO ATTEND HAMAZKAYIN ANI DANCE COMPANY 35TH ANNIVERSARY BANQUET

On the evening of Saturday, March 7th, the 35th anniversary banquet of the Hamazkayin Ani Dance Company will take place at "Deukmejian" Hall of Ararat Home in Mission Hills.

The evening will feature a performance by the Ani Dance Group led by directors Mrs. Suzy Barseghian-Tarpinian and Mr. Yeghia Hasholian.

The Prelate will attend and convey his blessings. He will be accompanied by Pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian and Executive Council member Mr. Khatchig Yeretzian.

ՀԱՅ ԱՒԵՏ. ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 27-ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԸ

Կազմակերպութեամբ Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանի հոգաբարձութեան, Շաբաթ, Մարտ 7-ի երեկոյեան, ճաշկերոյթով մը պիտի նշուի վարժարանին 27-րդ տարեդարձը:

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Միացեալ Հայ Ժողովական եկեղեցւոյ «Աւագեան» սրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հոր, Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տեմիրճեան ներկայ պիտի ըսլլ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին գնահատանքի եւ օրհնութեան խօսքը:

MERDINIAN SCHOOL ANNUAL BANQUET

On the evening of Saturday, March 7th, the 27th annual banquet of Charlotte and Elise Merdinian Evangelical School will take place at “Avazian” Hall of the United Armenian Congregational Church.

Pastor of St. Mary’s Church Rev. Fr. Ardag Demirjian will represent the Prelate and convey his blessings and remarks.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԱՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏԻԿՆԱՆՑ ԱՂՕԹՔԻ ՕՐՈՒԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Ուրբաթ, Մարտ 6-ի առաւօտեան, Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ նշուեցաւ Քրիստոնեայ Տիկնանց Համաշխարհային Աղօթքի օրը, որուն բնաբանն էր «Քրիստոսով մէկ ենք, բայց շատ անդամներով»:



Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ արարողութեան եւ փոխանցեց իր օրհնութիւնները: Ներկայ էին Հայ Կաթողիկէ համայնքի պետ Հոգ. Տ. Աստուծաբար Վրդ. Սարոյեան եւ Հայ Աւետ. Միութեան նախագահ Վեր. Յովսէփ Մաթոսեան: Բացման աղօթքը կատարեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան: Ներկաներուն ողջոյնի խօսք ուղղեց հիւրընկալ եկեղեցւոյ Տիկնանց Միութեան

ատենապետ Տիկ. Մէլի Չաղաքապանեան:

Յայտագիրը կազմուած էր աղօթքներով, հոգեւոր երգերով, Աստուածաշունչէն ընթերցումներով եւ յաւուր պատշաճի ու գնահատանքի խօսքերով: Աղօթքով ու օրուան խորհուրդին անդրադարձող խորհրդածութիւններով խօսք առին Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետ. եկեղեցիներու հոգեւոր հայրերը: Եզրափակիչ օրհնութեան աղօթքը կատարեց Առաջնորդ Սրբազանը:

PRELATE PARTICIPATED IN WOMEN'S WORLD DAY OF PRAYER

On the morning of Sunday, March 6th, the Prelate participated in the annual Women's World Day of Prayer at St. Mary's Church, the theme of which was "In Christ there are many members, yet one body".



Rector of the Armenian Catholic Church Very Rev. Fr. Andon Saroyan and Minister of the Armenian Evangelical Union of North American Rev. Joe Matossian also participated.

The opening prayer was offered by parish pastor Rev. Fr. Vazken Atmajian. Welcoming remarks were delivered by parish Ladies Auxiliary Chair Mrs. Mary Tchaghatsbanian.

The program consisted of prayer, spiritual songs, and scripture readings.

Very Rev. Fr. Andon Saroyan and Rev. Joe Matossian also offered their remarks and messages.

The event concluded with the benediction by the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Տ. Օ. ՄԱՐՄԻՆԻ ՄԵԾ ՊԱՅՈՑ ԱՄԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Մեծ Պահոց շրջանին, թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի կ'ունենան Արեւագալի եւ Հսկումի արարողութիւններ, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերուն:

Չորեքշաբթի, Մարտ 4-ի առաւօտուն, Առաջնորդ Սրբազանը հանդիսապետեց Կլենտլիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան, որուն աւարտին, օրուան հոգեւոր խօսքը փոխանցեց Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

Արարողութենէն ետք, եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի կազմակերպած Մեծ Պահքի աւանդական ճաշկերոյթը:

Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամ Տիկին Հուրիկ Ապտուլեան ներկայներուն բարի գալուստ մաղթեց, շնորհակալութիւն յայտնեց անոց քաջալերանքին համար եւ հաճելի ժամանց մաղթեց բոլորին:

Առաջնորդ Սրբազան Հայրը օրհնեց սեղանները ու փոխանցեց իր օրհնութեան խօսքը: Ան նաեւ գնահատեց Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի աշխատանքները:

Իրագործուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Մեծ Պահքի մասին օրուան խօսքը փոխանցեց Տիկին Հուրիկ Ապտուլեան:

Ձեռնարկին ներկայ էին շրջաններու ՀՕՄ-ի եւ եկեղեցիներու Տիկնանց միութիւններէն շուրջ 200 անդամներ եւ մասնակիցներ:

PRELATE PRESIDES OVER ANNUAL LENTEN LUNCHEON

On the morning of Wednesday, March 4th, the Prelate presided over Sunrise Service at St. Mary's Church. The sermon was delivered by Very Rev. Fr.Barthev Gulumian.

Following services, the Prelate presided over the annual Prelacy Ladies Auxiliary Lenten luncheon at "Armenag Der Bedrossian" Hall, in which over 200 guests participated.

Welcoming remarks were offered by Ladies Auxiliary member Mrs. Hourig Abdulian, who later also delivered the message of the day.

The Prelate offered the invocation and in his remarks commended the Ladies Auxiliary for their service.

An artistic program also took place.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 3 Մարտի երեկոյեան Ազգային Առաջնորդարանի մէջ

Առաջնորդ Սրբազանը ընդունեց այցելութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային

Սկաուտական

խորհուրդի

ներկայացուցիչներուն,

որոնք

աշխատանքային

հանդիպում մը

ունեցան Առաջնորդ

Սրբազանին հետ:

Հանդիպումին ներկայ

եղաւ Կլենտէյլի Ս.

Աստուածածին

եկեղեցւոյ հոգեւոր



հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Թիւրքաճեան:

Ներկայ էին Հ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամ եւ Վարչութեան մօտ Սկաուտական ծրագիրներու ներկայացուցիչ՝ Փիեռ Մանուկեան եւ Հ.Ս.Ը.Մ.ի Սկաուտական Խմբապետական կազմի Խմբապետուհի՝ Թալին Հինտոյեան:

Նկատի ունենալով, որ Վեհափառ Հայրապետը 2009 տարին հռչակած է Երիտասարդութեան տարի, քննարկուեցան ու մշակուեցան սկաուտներու եւ մեր եկեղեցւոյ երիտասարդական միութեանց միջեւ գործակցաբար իրագործելի ծրագիրներ:

PRELATE WELCOMES HOMENETMEN CENTRAL SCOUTING COUNCIL

On the evening of Tuesday, March 3rd, the Prelate welcomed to the Prelate members of the Homenetmen Central Scouting Council. Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian was also present at the meeting.

The delegation also included member of the Homenetmen Regional Executive and Scouting Council representative Mr. Pierre Manoukian and scouting leader Ms. Taline Hindoyan.

Given that H.H. Catholicos Aram I has proclaimed 2009 as the Year of the Youth, the Prelate and guests discussed opportunities for collaboration between the scouts and the Prelacy youth committees.
